



# Ա Ր Ա Ջ Ի Ռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԿԱՆ  
ԹԻՒ 6.

Ա Մ Ա Ա Գ Ի Բ

ՅՈՒՆԻ 30.  
1870.

Ա Զ Գ Ա Յ Ի Ե , Բ Ա Ն Ա Ս Ի Բ Ա Կ Ա Ն Ե Խ Գ Բ Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն

## Կ Բ Օ Ն Ա Կ Ա Վ Ա Ք

ՊԵՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԼՈՒԺՈՒՄՆ ԽԱԲԱՌՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԼԱԿԱՆ ՏԱՐԱԿԱՆ ՏԵՂՄԵՐՈՒԹԵԱՆՑ  
ԿԱՅԱԺՈՒԴԱԿԵ ԵՒ Է ՁՄՄԱՆՆԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՐՈՒԹԵԱՆՑ <sup>(\*)</sup>

Մատական Աւետարանին Եւ Գլ  
17. ըսածն ահաւասիկ, Ո՞ի համարիք  
և թէ եկի ըսածանել զգրէնո կամ ըս-  
մարդարէս, մշեկի ըսածանել, այլ լո-  
նուլ։ Վմէն առեմ ձեզ մինչեւ անց  
ցէն երկինք և երկիր, յափս մի օր նու-  
շանախեց մի է ոչ անցցէ յօրինացն և  
՚ի մարդարէից, մինչեւ ամենայն եւ  
զիցի։

Հին օրէնքը բոլոր նորին օրինակն  
էր, նորն է ճշմարտութիւն, հին օ-  
րէնքն ստուեր մ՚էր, նորը՝ լցու, հին  
օրէնքը իւր ստուերական խորհուրդ-

(\*) Հարունակութիւն, առև թիւ (5).

ներուն համար Արուսաղէմ քաղաքի  
և Աղջումնեան տաճարի պէտք ուներու  
Նոր օրէնքն ալ ըստ սրում լցու և ոչ  
տուեր, չունի երբէք պէտք Հռովմ  
քաղաքի, Պետրոսեան տաճարի, այլ  
իւր Արուսաղէմն է Ճշմարիտ հաւա-  
տացեալը, իւր տաճարն է Ճշմարիտ  
հաւատացելը հոգին։ Ո. Գրոց վե-  
կայութիւնները կը դնեմք ահաւասիկ  
յայտնապէս, և ոչ խարեւբացարար ։

Այս և Աղջումն շննեաց նմա տուն,  
այլ ոչ եթէ բարձրեալն ՚ի ձեռագործ  
տաճարա բնակէ ու Գործ ։ Ե. Գլ 48.  
Ա Ասոււած որ արար զաշմարհս,

և զամենայն որ ՚ի նմա , նա երկնից և երկրի է տէր . ոչ ՚ի ձեռադործ տա ճարս բնակէ . և ոչ ՚ի ձեռաց մարդկան պաշտի իրրեւ կարօտ իմիք . նա տայ ամենայնի կեանս և շունչ և զա մենայն ինչ . Արար ՚ի միոջէ արենէ զամենայն ազգս մարդկան , բնակել ՚ի վերայ երեսաց ամենայն երկրի . հաստատեաց կարգեալ ժամանակս և սահմանադրութիւնս բնակութեան նոցա՝ խնդրել զիստուած . Օ ի թե րեւս զննիցեն զնա և դտանիցեն , նա և ոչ հեռի իսկ է յիւրաքանչիւր ու մեքէ ՚ի մէնջ : Օ ի նովու կեամք , և շարմիմք , և եմքո : Գործ . ձէ . Գ. Լ.

24-28 :

“Ո՞չ գիտէք եթէ տաճար էք Արտուծոյ , և Հոգի Արտուծոյ բնակեալ է ՚ի ձեզ . եթէ ոք զտաճար Արտուծոյ ապականէ , ապականեսցէ զնա Արտուծո . զի տաճար Արտուծոյ սուրբ է , որ էք դուք ” : Ա . Իրն . Գ . Գ. Լ . 16-17 :

“Ղթէ ո՞չ գիտէք , զի մարմինք ձեր տաճար են Հոգւոյն որ է ՚ի ձեզ զոր ունիքն Արտուծոյ . և չէք անձանց տէր , քանզի գնաց գնեցայք . փառաւոր արարէք զիստուած ՚ի մարմինս ձեր և յօգիս ձեր ” : Ա . Իրն . Ձ . Գ. Լ . 19-20 :

“ Քանզի գիտեմք , զի եթէ տաճար երկրաւոր շինուածոյս մերս քակտեսցի , շինած Արտուծոյ ունիմք , տաճար առանց ձեռադործի յաւի տենական յերկինսուու : Բ . Իրն . Ե . Գ. Լ . 1 :

“ Արարէն դուք տաճար Արտուծոյ կենդանւոյ էք . որպէս ասաց Արտուծած թէ բնակեցաց ՚ի նոսա . եւ գնացից ՚ի նոսա . և եղէց նոցա Արտուծած , և նորա եղիցին իմ ժողովուրդք ” : Բ . Իրն . Ձ . 16 :

“ Այսմ ՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի , դուք որ երբեմն հեռաւորքն

էիք , մերձաւորք եղերուք արեամբն Քրիստոսի . . . . . հաշոեցուսցէ զերկսախն միովլ մարմինովլ ընդ Արտուծուծոյ խաջիւն իւրով . . . . . Արտայսուհետեւ ոչ էք օտարք և պահդուխտք . այլ քաղաքակեցք որբոց , և ընտանիք Արտուծոյ . շինեալք ՚ի վերայ հիման Արտելոց և Վարդարէից . որոյ է գլուխ անկեանն Յիսուս Քրիստոս . յորում ամենայն շինուածս յօդեալ և պատշաճեալ աճէ ՚ի տաճար սուրբ տէր . յորում և գուք ընդ նմին շինիք ՚ի բնակութիւն Արտուծոյ Հոգւովլ ” : Եթէ . Բ . Գ. Լ . 13-22 :

“ Հակառակորդն հպարտացեալ ՚ի վերայ ամենայնի , որ անուանեալ իցէ Արտուծած՝ կամ պաշտօն , մինչեւ նատելնմա ՚ի տաճարին Արտուծոյ և ցուցանել զանձն թէ Արտուծած իցէու : Թէ . Բ . Գ. Լ . 4 :

“ Ղւ դուք իրրեւ զվեմա կենդանիս շինիք տաճար հոգեւոր , յանարատ քահանայութիւն , մատուցանել զհոգեւորն պատարագս հաճոյ Արտուծոյ ՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի . քանզի կայ իսկ ՚ի զրի . եթէ ահաւասիկ գնեմ ՚ի Ախոն վէմ ընտիր , գլուխ անկեան պատուական . և որ ՚ի նա հաւատացից մի ամաչեսցէ ” : Ա . Պետ . Բ . Գ. Լ . 5-6 :

“ Ա ասն այսորիկ դնեմ ծունր առ հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի . . . զի տացէ ձեզ ըստ մեծութեան փառաց իւրօց հաստատել դրութեամբ ՚ի ձեռն Հոգւովլ իւրց ՚ի ներքին մարդն , բնակել Քրիստոսի հաւատովլք ՚ի սիրոս ձեր . սիրովլ արմատացեալք և հաստատեալք ” :

“ Այս վկայութիւնները միայն կը նայ մէջ բերել Հայաստանեաց Եկեղեցին որպէս Ա . Գրոց հոգին են : Քրիստոսնեայ Եկեղեցի մը Ա . Գրոց

համաձայնութեամբ ուղղափառ է . և այն հին կտակարանին համեմատուելով, նոր կտակարանին իսկ և իսկն ըլլալով : Եւ ոչ թէ Հռովմականին ոկտ Հարց խօսքերու վրայ հիմնուած Տրիդ . Փլորենտ . ժողովց և Քաղկեդոնի նախագասութիւնները պաշտելով : Հայաստանեաց Եկեղեցին իւր պէտքը Վրաքելոց գրուածքներէն միշտ հայթայթելու զգուշութին ունեցած է . իսկ Հռովմայեցին ոչ այնպէս . աղ (Օ)գոտինուի գրուածք ներէն . Հարբերդի գրուածքներէն և այլն . որոց եթէ խօսքերը քննուին, կամ ուղիղ խօսած են, և արդի հրովմականներէն թիւր մեկնուած, և կամ նոյն ինքն հեղինակին բերնէն սխալ դուրս ելած :

Հայաստանեացց Ա . Եկեղեցին կընդունի Վրաքելոց խօսքը ոչ իրեն մարդկային խորհրդով ըսուած, այլ նոյն ինքն Հոգւով Արքով ըսուած ինչպէս Ա . Գիրք կը վկայեն :

Ա՛թէ ոք սիրե զիս զբանն իմ պահեացէ, և Հայր իմ սիրեացէ զնա . և առ նա եկեսցուք, և օթեվլանս առ նմա արացուք : Եւ որ ոչն սիրէ զիս՝ զբանն իմ ոչ պահէ, և զբանն իմ զորլուք՝ ոչ է իմ . այլ Հօրե՞ որ առաքեացն զիս : Օայս խօսեցոց ընդ ձեզ մինչ առ ձեզ եմ . իսկ միսիթարիչն Հոգին սուրբ զոր առաքեացէ Հոգը յանուն իմ, նա ուսուացէ ձեզ զամենացն, որ ինչ ասացի ձեզ . և յիշեցուացէ ձեզ : Յուշ . Ճ. Գ. Գլ. 23-26 » :

Վ. Առջլառնիք զօրութիւն ՚ի հասանել Հոգւոցն Արքոց ՚ի վերայ ձեր . և եղիջիք ինձ վկայք Աշրուստղէմ և յամենայն Հրեաստանի և ՚ի Ամարիս և մինչեւ ՚ի ծագս երկրիու Գործ . և Գլ. 8 :

Եւ եղեւ յանկարծակի հնչեն

յերկնից Եկեղեցիրեւ սաստիկ հողմոյ . և Ելից զամենայն տունն յօրում նստելին . և երեւեցան նոցա բաժանեալ լեզուք իրեւ ՚ի հրօյ և նստու իւրաքանչիւր ՚ի վերայ նոցա . և լրցան ամենեքեան Հոգւով Արքով, և սկսան խօսել յայլեայլ լեզուք որպէս և Հոգին տայր բարբառել նոցա Գործ . Բ . Գլ. 2-4 » :

“Կիարսո լցեալ Հոգւով Արքով ասէ ցնոսա : Գործ . Գ . Գլ. 8 » :

“Ես տաց ձեզ բերան և իմաստութիւն, որում ոչ կարիցեն կալ հակառակ կամ տալ պատասխանի ամենայն հակառակորդք ձեր : Դ. Ի. ԻԱ . Գլ. 16 » :

ԱԵզի խօսուած խօսքերու մէջ Տրիդ . ժողովց խօսքերէն վկայութիւն բերելու հարկ չկայ, մեզ համար մի և նոյն հնչումն են թէ պապերուն արդարութեամաց վկայութիւն խօսքը, և թէ այդ ժողովներու որոշածքը ԱԵնք ալ ունինք Հայրեր որոնք ուղղակի Ա . Գիրքէն կը խօսին և ոչ Հռովմական Հայրէն կամ (Օ)գոտինուակէն, և այլն . սակայն մենք այս տեսուկ վեճերու մէջ դարձեալ անոնց բանքը չեմք առներ ձեռքերնիս, այլ Ա . Գիրքը կը բերեմք մէջ տեղ անգծելի վահան անոնց նետերուն գէմ և բացէ ՚ի բաց խայտառակիչ անոնց ամէն ստութիւննցը :

Հռովմաց Եկեղեցին կաթուզիկէ ըլլալուն վկայութիւն միայն Տրիդ . և Փլորենտ . ժողովց խօսքերը մէջ բերել կ'ուզէ, զորս մենք չենք ճանաչեր . Ախւրզի Արուսազեմացւոց կոչումնը ծանցութեամբ ձեռք կ'առնու կոչմամբ և ոչ վկայութիւնը գնելով . Ախւրզի խօսքերն ըստ Վեետարանի բալը ուղիղ ըլլալով կ'ընդունի զայն նաև Հայաստանեացս Եկեղեցին . սակայն մենք Հայրէ կը կարդամք Ախւրզի գր-

բուածքը, և իւր ըստ ու գիտած ընդհանրական Ակեղեցին ալմեր զիս. ցածին համաձայն ամեն Քրիստոնեաց Ակեղեցեաց միունը կը գտնամք. ու բառն մէջ արդէն դու շակելիք խօսքեր կան ըստածները բացացաց և և մեկնողական ըլլատվ. և Հռովմի անունն ամենեւին չկայ:

Ուստիթէսոփ Աւետարանի Ե. Գ. 17 համարն ու Ախւրյա Արք Բնջ. որպէս թէ հաստատէին Հռովմաց Ակեղեցւոյն կաթուղիկէ Ակեղեցին ըւրալը. և այնպէս մէջ կը բերէ տարբերութեանց հաւաքիչ վերապառւելին. չարաշար փաստի մը զօրութիւր ու միայն շատ հասկցողներու, այլ և շատ մը չհասկացողներու ալ ծաղը բելի է. և փաստ մը, որ փաստաբանը կը խայտառակիէ:

Վերապառուելին կ'ըսէ որ բերուած վկայութեանց հակառակ Հայութը կը գանգատին ու կ'ըսէն « մեր Հայութը սա լեռան տակ ազատ Ուսեաց ստորան երկրագագութիւն ըրին, բայց դուք կաթուղիկեայք կ'ըսէք թէ, միայն կաթուղիկէ Հռովմական Ակեղեցւոյ հնազանդութեան մէջ կընայ Վստուծոյ ընդունելի երկրագագութիւն ըլլալո»:

Ուսկայն ոչ եթէ արտէս կ'ըսէն Հայերը. թէ Վզոտ Ուսեաց ստորառը կ'երկրագագեն իրենց հարցը պէս և չեն երկրագագեր կաթուղիկէ Հռովմէական Ակեղեցւոյ հնազանդութեան մէջ, այլ թէ ոչ Հռովմի և ոչ Հայաստանի իսկ Ուսեաց ստորառը, այլ Հռովմի և Հմամատութիւնը ամենու ուրիշ Վստուծոյ կ'երկրագագեն, և Վստուած է որ կ'ըսէդունի անոնց երկրագագութիւնը. Հայերը Փապին չեն երկրագագեր. որ Փապը իւր կարծած իշխանութեամբը մերժէ և քննդունի ասոնց ըրուծ երկրագագութիւն:

Դիցուք թէ համայն աշխատքն Արեւելք և արեւմուտք Հռովմէականաց վարմի բանուելով կամաւ կամ ակամոյ կուրութիւնը ալ խստավանին թէ Փապին անսխալէ, Փապը Կոմիթողիկէ Ակեղեցւոյ գլուխին է, մենք դարձեալ բուն Հայ ոգուով, Հայաստանեաց Ակեղեցւոյ կարգացած Աւետարանին. (զոր ՚ի Քրիստոսէ առին ամեն աղդ հաւատարապէս) վկայութեանց զօրութեամբը, և մեր խելքի կը մասն գիտենք և կը ճանաչնք թէ Փապը մարդ է եւ մարդու տղայ. Փապը սխալական է, Փապը կը սխալի կը մեղանէք ալ, և թէ Փապը շատ կը սխալի, և շատ կը մեղանէք, և թէ Փապը շատ սխալած և շատ մեղանչած է, եթէ քննութեամբ ճշմարիտ ըլլութ վկայուած պատմութեանց արձանագրութիւններն հնութիւնները կը նան աւանդել ապագային:

Ալ շարունակէ դարձեալ վերապառուելին, « Ի՞նչ ունի առ եկեղեցին, կ'ըսէն Հայերը, որն որ ՎՃիւածնական Ակեղեցւոյ պակսի, բահանայութիւն, խորհուրդ, վարդապետութիւն, հոս յոյս, անդին փրկութիւն երկուքին մէջն ալ նոյն է. Ուսկայն քանի մը նորամուա անտեղութիւնը են, որոնք Հռովմէական Ակեղեցւոյ բորբոքմբն յատուկ կը մնան».

Այս, ժողովուրդ մը Հայն է, ժողովուրդ մ'ալ Հռովմացեցին. Ակեղեցի մը կը կազմէ Հայոց ժողովուրդը եկեղեցի մ'ալ կը կազմէ Հռովմայեցի ժողովուրդը. և այս մասնաւոր ամեն Քրիստոնեաց եկեղեցեաց միութիւնն է, որ կաթողիկէ Ակեղեցի կ'ըստի, որց գլուխ միակ ինքն Քրիստոսէ<sup>(1)</sup>, Հռովմայեցւոց միայն

(1) «Զի մի յայսմհետք իշխան տղաք Խռովմէական առաջնորդ յամանակը յամանաց հոգին Փարտագութեան խորէութեամբ մարդկան խորաման-

կը մեան այն անտեղութիւնները զբ  
նոր ՚ի նորոց կը հանեն փառ ամսու-  
թեան կիրքերէ դրդեալ, ներսօնւթեն  
կոնդակներ ցրուել, աշխարհի ամեն  
կողմին ունենալ Պապին անսխալութիւր  
համազող վարդապետներ, ուրիշ Վր-  
բիստնեայ ազգաց հերետիկոս լսել։  
Մարդոց Աստուծոց ընելիք երկրոպա-  
գութիւնն իրեն ծոցը բանտարկել,  
խօսքով թէ “Արտաքրու Հոռվիաց չեմ  
փրկութիւն ու Այս աեսակ ստրո-  
գայներու մէջ կը տարբերիմք Հոռվի-  
մէն յաւիտեան, վասն զի մեր Ակե-  
ղեցւոյն մէջ գործելի մեղաց թողու-  
թիւն երբէք լսած չեմք, և չգոր-  
ծուած մեղաց համար թողութիւնն  
ովէտք ըլլալը քաջ գիտեմք։ Ենդ ործ  
մեղաց Բնոցիւս թողութիւն պիտի ը-  
նէ մէկը, Նոյն ինքն Վրբիստակ ըրած  
թողութիւններուն կարգը չկայ այդ  
տեսակ թողութիւն մը (1)։

Կոթեամբ ՚ի խարէ ուժիւն մոլոր թեան, ոյլ  
ձշմարտակը միրով ամեցուցուք ՚ի նու զամենացն  
որ է գուի քրիստոս Եվէս, Դ. Գ. 14—15, +

“Նու (քրիստոս) է զըսի մորմաց Եվէլզեց  
կու, Ե. 18+”

Անդ է զըսի հնոջ, որպէս և քրիստոս զը-  
սին է Եկեղեցւ։ Եվէս Ե. Գ. 25+”

(1) Զգոշ կացէք անմանց, Եթէ մեղիցէ Եղոյա-  
րն քու, ասսան անմա, և եթէ ապահարիցէ թող  
նմա, և եթէ եօթն անգամ մեղիցէ քեզ, և Եօթն  
անգամ գործցի ՚ի քեզ, և ասիցէ ապահարիցէ,  
թողցէն անմա, Դ. ունչ Ճ. Գ. 5—4+”

“Խարձեալ ՚ի կինն կողմէ առէ ցիլինիք, ուստա-  
նեն զայս կին, մոտի ՚ի առուն քու, չուր սոխի լուց  
ոչ ետուր, իսկ առ արտասառաք իւրովք Եթաց զո-  
տուիմ . . . . Վասն որոց թողեալ լիցին ամա մեղիք  
իւր բալըւմք, զի այց որիքայ . . . . Եւ առէ ցան  
(ցիլինն) թողեալ լիցին քեզ մեղիք քու, Դ. ունչ Ճ.  
44. 48+”

“Քային առ նա և բերէին անդամալցն մի  
բարձեալ ՚ի չորիք, իւրեւ ոչ կարէին մերձննալ առ  
նա յամբնիսէ անախ, քակեցին զարիկն ուր էր Յի-  
սուս և բացեալ զառառառազն իջուցին զմահիճնն  
յորում կոյց անդամալցն, և տեսնալ Յիսուսի  
զիւառառ նոց, առէ ցանդամալցն, որդեակ,  
թողեալ լիցին քեզ մեղիք քու, Մ. Գ. 5—3+”

“Զի՞ նորէիք զայտ ՚ի օրիտոս ձեր, զի՞ Եւրին

“Վեր տարածայնութիւնները,  
քանի մը անտեղութեանց ամփոփե-  
լով, գործերնիս լինցուցած չենք ըւ-  
լար կըսէ վերապատուելին, վասն զի  
մեր տարածայնութիւնները մինակ  
այն “անտեղութիւնները չեն, եւ  
աս անտեղութիւն ըսուածները կար-  
ծուածէն շատ աւելի խոշոր վիհեր  
են, որոնց վասն ասանկ թեթեւ  
չենք կրնար ցաւքիւն։ Ասնցմէ միայն  
Քը կրնայ մեր յու խոնական միջ-  
նորմն ըլլու”։

Այս Հայաստաննեաց Ակեղեցւց  
ըսուծ անտեղութեանց մէջ կան այն-  
պիսի պարագայներ ալ, որ խորունկ  
վիհեր են, զոր անցած են Հայերն ան-  
տեղութիւն ըսելով։ Ասկայն վերա-

եւ առեւ ցանդամալցն, թաղեալ լիցին քեզ մեղիք  
քու, Եթէ առեւ արի առ զմահիճն քու, և Եթի ՚ի  
տան քու, Ա. Ա. զի գիտանչիք, Եթէ իշխանութիւնն  
ունի Երդի մորդց ՚ի վերա երկրի թողուլ զմեղու-  
առէ ցանդամալցն, քեզ առեւ, արի առ զմահի-  
ճն քու, և Եթի ՚ի տան քու, Եւ յարեաւ, և  
վազգաղակի առ եռալ զմահիճն առ, և տաաջի առնեն-  
ցուն, և նշեւ զարմանալ ամեննցուն և փառաւոր  
առնեւ զիւառած և առեւ, Եթէ այսպիսի ինչ եր-  
բէք ոչ տեսաց ու Մարտ. Բ. Գ. 8—12:

“Բրագէս առարքաց զիս Հայր, և Եւ առարքաց  
զիւեզ և զոյս իւրիւ տասոց, փշեաց ՚ի նուսա և տ-  
սէ, առեւ հօգի ուուրբ, Եթէ ումեր թողուցուք  
զեկու, թողեալ լիցին ցա, Եթէ զուրուք ունիցիք,  
կալեալ լիցին ։ Յունչ. Ի. Գ. 20—25”

“Ակն յամենացն կողմին յարդ անառու քար զել  
միրութիւն ապաշխարութեան ՚ի թողութիւն մե-  
զացու, Դ. ունչ. Ի. Գ. 25”

“Քանզի ամեներին մեղան . . . . և արդարանան  
ձեր նորին շնորհօք ՚ի ձեռն գրկութեանն որ ՚ի  
Քիւեաս Յիսուս, զըր յաւացն եղ Աստուած քա-  
ռութիւն ՚ի ձեռն հաւատացն արեամբ նորա ՚ի հան-  
գես արդարութիւն նորա վասն թողութեան յառա-  
ջազն մեղան զործելոց ու Հառչ. Ի. Գ. 25—26”

“Եւ լուեալ զայս (գրարու գիւտորսի) զղացան  
՚ի օրիտոս իւրեանց և առեն ցՊետրոս և ցայդ առա-  
քեալուն, զի՞նչ գործեացուք արք Եղարք, առեւ  
ցնուս Պետրոս, ապաշտուեցէք և մկանցի իւրա-  
քանչերու ոք ՚ի ձեռն յանուն տեան Յիսուսի Քը-  
րիստոսի ՚ի թողութիւն մեղաց, և Հնկալնիք զուե-  
սիս հոգւացն որբոց զի ձեզ են առեւիրս և ուղարց  
ձերց”։ Ի. Գ. 57—59”

պատուելին որ կ'ուղէ այս անտեղութեանց խոշօր վիճեր ըլլալն հաստատել, միանգամցն չհաստատեր ալ, ըստ որում երկար կը խօսի հաղորդութեան բաժակի անապակ կամ յախառն ըլլալուն վայ եւ կ'ուղէ այսպիսի պարագայ մը Հրեից կարծեցեալ աւստեղութեաններէն հաստատելով յա-իպէնալին Թջնորթն ընել։ Ոինչդեռ Հռովմայ եկեղեցին Հաղորդութեան խորհուրդը բոլորովին խանգարած է ։ Վեետարանին դէմ ընդդէմ հակառակ խորհուրդը զանալով ժողովուեան . Դամբրձնան վերապատուելին ելեր օտար ու մանր պարագայներէ Հայոց և Հռովմայեցոց միջնորմն հանել կ'ուղէ։

Փոխանակ ասդին անդին իննալու եթէ մեղ հաղոցանէիք անգամ մը, մենք դիւրաւ կը գտնէինք Շեղ մեր ու ձեր մէջ եղած միջնորմները, ինչուն է ահաւասիկ .

Հայերը ընդհանրական Եկեղեցւոց գլուխ նոյն նիկն դՔրիառոս կ'ընդունին .

Հռովմայեցիները ընդհանրական Եկեղեցւոց գլուխ նոյն նիկն կամ կարդ մը կարդինալաց կամոցն համաձայն ըստիպմամբ և սպասնալով այս ստորագրել տալով, սիեղերական ժողով և հոգեկոսութիւն ըլլար :

Տ սիզբանէ և այսր Հայերն երեք սիեղերական ժողով միայն կ'ընդունին անսուցմէ գուրս ժողովոց անուն չեն ձանաչեր .

Հռովմայեցիները ժողովուրդն ու նարժան սեպելով հաղորդութեան, ժողովուրդն առանց խորհրդոյն հաղորդելու կը թողուն, որ միայն սեղանոյն վայ գրուած հացը ճաշակէ .

Հայերը այնպիսի անարդ ու անսպատեհ ածաբանութիւններ ըսւնին որ իրենց սովորուցնէ նորատեսակ մը կրտութիւններ, յդին որսալայնի սաղմնը կամ դեռ ջնած մանուկը քրիստոնեայ ընել և քրիստոնեութեան մէջ մեռցնել, Հռովմայեցիներն ունին անհամար տնտեղանութիւններ,

որ աւելի մեղագանութիւններ կը պարունակեն քան թէ աստուածաբանութիւններ, որ իրենց նորանոր գործիքներով ( վրինկայներով ) դեռ ջնած մանկանց միլուութիւն ընել կը սպասեցնէ . խռատվանատրդիին ըստիացած մեղոց աեսակներն ալ կը դաստիառ :

Վհա ասմիք են մեր ու հառմայեցոց տարրերութիւնները, մէկ մ'ալ որ Հռովմայեցիք աւելաբարապաշտութեամբ այլ այլ նորատեսվծ տիեզերական ժողովներ կ'ընդունին . որոց ամենաւ ալ նպատակը թերեւս խարէութիւններ ըլլան եթէ քննուին, և Պապին անոխալութեան սկզբունքն հրատարակելու համար թերեւս ժողովուածած, ասմաց խօսքերն ու պատգամները մափկ կ'ընեն Հռովմայեցիք և ալ է իրենց արդ իրողը թող հակառ մէկ ամեղերական ժողով ճանաչեն . Ռանադատութեամբ Շքեւելքէն երկու կամ երեք Հայինկապոս տանելալ և անոնց ալ Պապին կամ կարդ մը կարդինալաց կամոցն համաձայն ըստիպմամբ և սպասնալով այս ստորագրել տալով, սիեղերական ժողով և հոգեկոսութիւն ըլլար :

Տ սիզբանէ և այսր Հայերն երեք սիեղերական ժողով միայն կ'ընդունին անսուցմէ գուրս ժողովոց անուն չեն ձանաչեր .

Վանցմէ կը գանգաւասի վերապատուելին թէ Հռովմէականաց չեղող Վրեւելքան քրիստոնեից մէջ չկայ քրիստոնեայ ազգ մը որ Հայոց չափ մատ ըլլայ Հռովմէականաց ծիսի կումանէ . Եւ զժուարաւ կը գտնուի կ'ըսէ քրիստոնեայ հասարակութիւն մը՝ որ անշափ հեռի ըլլայ Հռովմէական եկեղեցին հաւատոյն կամ վարդապետութեանը կողմանէ որչափ Հայոց հասարակութիւնը :

Ասք ալ փաստ կը բերէ արդի  
Յունաց և Հայոց եկեղեցիները, թէ  
յունաց եկեղեցին բոլորովն կը գա-  
տապարտէ Հռովմայ հաւատքն ալ,  
և Հայոց եկեղեցին անոր հաւատոցը  
յարգութիւն եւ պատկառանկը կը  
պահէ :

Էյունաց կղերը կըսէ . իրեն կը  
պահէ իւր ժողովուրդը Հռովմէական  
եկեղեցւոյ վարդապետութիւնը մո-  
լորական է ըսելով : Հայոց կղերն ալ  
յարգութիւն կը պահէ մեր ու հը-  
ռովմէական եկեղեցւոյ վարդապե-  
տութիւնը նոյն է ըսելով :

Ասկայն ոչ այնպէս, Հայ կղերը  
իւր ժողովուրդն իրեն կը պահէ իւր  
հաւատոյն եւ վարդապետութեան  
ուղղութիւնը աւետարանի վկայու-  
թեամբ հաստատելով : Եւ հռովմա-  
յեցւոյն դաւանութեան մօլորական  
ըլլալը համոզելու հարկ չմնար այն ա-  
տեն . ըստ որում նա արդէն գիտէ  
մի և նոյն Քրիստոսի վրայ ուղիղ հա-  
ւատք մը . և երբ իրենինէն օտար  
հռովմայեցւոյն հաւատքն ալ կը տես-  
նէ , իսկայն կ'սկսի դատել : Եւ ո-  
րավիճետեւ Հայոց դաւանութիւնն  
Վատուծոյ վրայ միայն կոյացած է , և  
հռովմայեցւոցը Վատուծոյ միանդա-  
մայն և Պատղին , ուստի ՚ի հարկէն է  
որ խորհուր մը ասոնց մէջ եղած իո-  
րունկ վիճերը տեսնէ , և չկարենաց  
անոնց վրայէն ցատկել :

( Ը արունակել ) :



Սկզբոնք . Կարծեաց ազատութիւն .  
Ճշմարիտ բանադառութիւնք : Ազ-  
գային դպրութեան Վրայ երկու խօսք .  
Երկրագործութէան հանրացումք : Հարստահարութիւնք :

Վնցեալ ամսուան բանասիրակա-  
նին վերջին կտորը որ մոռցուած էր ,  
կը դնեմք ՚ի ներքոյ :

Ով որ զգացում ունի , Թօղ այս  
արդար բոլորներուն հաւատարիմ  
թարգման ըլլայ , և ով որ գրիչ ունի  
թողիրեւ սուրբ՝ այն անողոք հարը-  
տահարիչներուն դէմ գործածէ :

Ուր որ չկայ այս զգացումը , հոն  
պատիւը ստուեր մ'է , իրաւունքը  
բառ մը , օրէնքը՝ խաղալիք և իշխա-  
նութիւնը՝ երեւոյթ մ'է :

Հայք՝ իրենց ինչքը , պատիւը  
և կեանքը երաշխաւորած Վրեւելեան  
Տաճկատանի ժողովուրդն են :

Երբ ժողովուրդ մը՝ ներկայ քա-  
ղաքակրթութեն դէմ այսօրինակ գոր-  
ծածուած ոճիներուն լուելեայն կը  
հանդուրժէ . և ազդ չտար պէտք ե-  
ղած տեղը , իրեն խղճի և աղդ . շա-  
հերը պաշտպանելու համար համա-  
զօր աղատութիւն , երաշխաւորու-  
թիւն և ապահովութիւն պարգեւող  
կառավարութեան դէմ մեղանչած կը  
սեպուի :

Ա . Յ . Վ ա շ է ա ն :

Վնցեալ ամսոյ Արօնի մէջ յիշուած  
Յիսուսեան կրօնաւորը, քաղաքիս մէջ  
ջուր հանելու մասին . Վո կառավա-  
րիչ Վ սեմ . Քեամիլ Փաշային տուած  
Նամակին օրինակը , զօր Գաղղիերէնէ  
թարգմանելով կը դնեմք մէր խոստ-  
ման համեմատ :

ՕՐԻՆԱԿ ՆԵՄՆԵՐԻՆ